ԳԴ/0309/01/24
(ՀԿԴ2/0013/01/22)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 օգոստոսի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Ելիզավետա Դանիելյանս, ուսումնասիրելով թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը որոշելու համար վարույթը ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2010 թվականի օգոստոսի 26-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է թիվ 61202010 (ԳԴ/0023/01/10) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի, Հովհաննես Գագիկի Համբարձումյանի և Խաչատուր Ռուբենի Շաբոյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

1.1. Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ թիվ ԳԴ/0023/01/10

քրեական գործից Հովհաննես Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ մասն անջատվել է և քրեական գործին տրվել է ԳԴ/0040/01/10 համարը: Նույն որոշմամբ ամբաստանյալ Հ.Համբարձումյանի թաքնվելու հիմքով քրեական գործի քննությունը կասեցվել է:

1.2. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ թիվ ԳԴ/0040/01/10 կասեցված քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Հակակոռուպցիոն դատարան:

2. Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանը 2022 թվականի սեպտեմբերի 19-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ2/0013/01/22 (ԳԴ/0040/01/10) քրեական վարույթը ստանձնելու, վերսկսելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանը 2022 թվականի սեպտեմբերի 29-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթով ինքնաբացարկ հայտնելու մասին:

2.1. 2022 թվականի սեպտեմբերի 30-ին թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթը մակագրվել է դատավոր Վ.Սարգսյանին:

Հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 3-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2.2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հուլիսի 26-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 5-ին որոշում է կայացրել թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը որոշելու համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի օգոստոսի 12-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Նախաքննության մարմնի որոշմամբ Հովհաննես Գագիկի Համբարձումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա *«(…) 2006-2008թթ հանդիսանալով «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետ, 2006-2008 թվականների ընթացքում նախնական համաձայնության է եկել «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Վարդենիս» մասնաճյուղի կառավարիչ՝ Արմեն Ռոբերտի Բաղդասարյանի, «Խաչատուր Շաբոյան» Ա/Ձ հիմնադիր-տնօրեն Խաչատուր Շաբոյանի և «Վասարթ» ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Խաչատրյանի հետ՝ կեղծ վարկերի կազմակերպմամբ տրամադրված առանձնապես խոշոր չափերի գումարները կանխիկացման եղանակով յուրացնելու և դրանք օրինականացնելու վերաբերյալ:*

Նախնական համաձայնությունը ձեռք բերելուց հետո Արմեն Բաղդասարյանը և Հովհաննես Համբարձումյանը 2006 թվականի հուլիսի 21-ից մինչև 2007 թվականի նոյեմբերի 7-ը ընկած ժամանակահատվածում, առանց մասնաճյուղի վարկառուների գիտության, նրանց անվամբ ձևակերպել են կենցաղային տեխնիկայի ձեռք բերման ապառիկ վարկ հատկացնելու թվով 198 կեղծ պայմանագրեր՝ 53.661.800 ՀՀ դրամ և 5.311 ԱՄՆ դոլար գումարի, ապա հանցավոր ճանապարհով ստացված գումարի իրական բնույթը, ծագումը, տնօրինման եղանակը թաքցնելու նպատակով, պայմանավորվածության համաձայն նույն ժամանակահատվածում, պարբերաբար փոխանցել են կենցաղային տեխնիկայի վաճառքով զբաղվող, միևնույն մասնաճյուղի հաճախորդ հանդիսացող «Խ.Շաբոյան» Ա/Ձ-ի և «Վասարթ» ՍՊԸ-ի հաշվեհամարին: Գումարները փոխանցելուց հետո Խաչատուր Շաբոյանը և Հովիկ Խաչատրյանն իրենց հաշվեհամարներից ստացել են Արմեն Բաղդասարյանի և Հովհաննես Համբարձումյանի կողմից իրենց հաշվեհամարներին փոխանցված վերը նշված գումարները ապօրինի կանխիկացրել են՝ իբր իրենց խանութներից ապառիկ կարգով վաճառել են կենցաղային տեխնիկա, որից հետո առձեռն ամբողջ գումարները փոխանցել են Ա.Բաղդասարյանին և Հ.Համբարձումյանին:

Յուրացման եղանակով հափշտակված գումարներից մի մասով կատարել են վարկերի մարումներ՝ իրենց կողմից կատարված հանցանքը չբացահայտելու համար, իսկ մնացած մասը տնօրինել և ծախսել են անձնական կարիքների համար: ՀՀ կենտրոնական բանկի մասնագետների կողմից «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ «Վարդենիս» մասնաճյուղում իրականացված 2006-2008 թվականների ստուգման արդյունքով հաշվետվության տեսքով կազմված բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող նպատակային ստուգման ակտի համաձայն՝ նշված կեղծ վարկերի պարտքերը չեն մարվել և 2010 թվականի մարտի 29-ի դրությամբ կազմել է 53.661.800 դրամից՝ 25.146.438 դրամ պարտք, տոկոս-տուգանքները՝ 22.991.977 դրամ, իսկ 5.311 ԱՄՆ դոլարից՝ 1.157 ԱՄՆ դոլար պարտք, տոկոս-տուգանքները 1.544 ԱՄՆ դոլար (...)»[1]*:*

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հուլիսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Վկայակոչված իրավական նորմերի բովանդակային վերլուծության արդյունքում Դատարանը՝ նախ և առաջ արձանագրում է, որ Հովհաննես Գագիկի Համբարձումյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինիս կողմից ենթադրյալ փողերի լվացումը չի կատարվել պաշտոնեական դիրքն օգտագործելով (առավել ևս՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով):*

Այլ կերպ, հանցակազմը ծանրացնող հիշյալ հանգամանքը չի մեղսագրվել Հովհաննես Գագիկի Համբարձումյանին:

Ինչ վերաբերում է Հովհաննես Գագիկի Համբարձումյանին մեղսագրված՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածին, ապա նույն օրենսգրքի N 6 հավելվածի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների ցանկում ներառվել է յուրացման կամ վատնման այն տեսակը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Նշված հանգամանքի հաշվառմամբ, Դատարանը գտնում է, որ պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված յուրացման սուբյեկտը հատուկ է, որպիսին կարող

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 248-249:

է հանդիսանալ բացառապես պաշտոնապար անձը, իսկ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնապար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Մինչդեռ, տվյալ դեպքում թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական գործով մեղադրյալներից որևէ մեկը (այդ թվում՝ նաև՝ Հովհաննես Գագիկի Համբարձումյանը) չի հանդիսացել պաշտոնապար անձ, քանի որ չի իրականացրել մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի կամ պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական գործով մեղադրյալ Հովհաննես Գագիկի Համբարձումյանը՝ մեղսագրված ենթադրյալ արարքները կատարելու պահին չի հանդիսացել պաշտոնապար անձ, ուստի 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցանքը նա չէր կարող կատարել պատոնեական դիրքն օգտագործելով:

Անդրադառնալով նաև հնարավոր այն մեկնաբանմանը, ըստ որի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածին, իսկ հիշյալ օրենսգրքի N 1 հավելվածի համաձայն՝

կոռուպցիոն հանցանքների ցանկում ընդգրկվել է վստահված գույքի հափշտակության այն տեսակը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Դատարանը հարկ է համարում նկատել, որ ծանրացնող հիշյալ հանգամանքը՝ մեղսագրված արարքը ենթադրաբար կատարելու պահին նախատեսված չի եղել, հետևաբար այն Հովհաննես Գագիկի Համբարձումյանին մեղսագրվել չի կարող՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը իսպառացնող կամ հանցանք կամ քրեական օրենսդրությամբ նախատեսված արարք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենսդրությունը հետադարձ ուժ չունի:

Վերոգրյալի հետ մեկտեղ Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ մեղադրյալ Հովհաննես Գագիկի Համբարձումյանին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրի մեջ նույնպես առկա չէ նշում՝ ենթադրյալ յուրացումը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելու մասին, սակայն հակառակ դրան մեղադրանքում առկա է՝ հանցակազմը ծանրացնող այլ հանգամանքի, մասնավորապես՝ առանձնապես խոշոր չափերով յուրացում կատարելու մասին հստակ ձևակերպում, ինչը ևս մեկ անգամ հաստատում է այն պնդումը, որ մեղադրյալներից որևէ մեկը (այդ թվում՝ Հովհաննես Գագիկի Համբարձումյանը) չի հանդիսացել պաշտոնատար անձ, հետևաբար ենթադրյալ հանցանքը կատարելիս չի օգտագործել պաշտոնական դիրքը, հակառակ դեպքում, Դատարանի գնահատմամբ, մեղադրանքի նկարագրում առկա կլիներ ենթադրյալ հափշտակությունը պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարելու մասին նշում:

Այսպիսով, Դատարանը հանգում է այն հետևության, որ տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, այլ ընդդատյա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, որի դատական տարածքում կատարվել են ենթադրյալ հանցանքները, հետևաբար

անհրաժեշտ է թիվ ՀԿԴ2/0013/01/22 քրեական վարույթը փոխանցել ըստ ընդդատության (…)»[2]*:*

7. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի օգոստոսի 5-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) [Գ]նահատելով քրեական գործի փաստական տվյալները՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև Հովհաննես Համբարձումյանին առաջադրված մեղադրանքում առկա չէ նշում իրեն վստահված գույքը «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» հափշտակված լինելու մասին, այդուհանդերձ մեղադրանքում առկա է նշում «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետի պաշտոնը վերջինիս կողմից զբաղեցրած լինելու, ինչպես նաև կեղծ վարկային պայմանագրեր կազմելով նշված բանկի գույքը յուրացնելու մասին, ինչից առավել քան ակնհայտ է, որ Հովհաննես Համբարձումյանն իր վերագրվող արարքը կատարել է ծառայողական լիազորություններն օգտագործելով:*

3.1.3. Անդրադառնալով այն պնդմանը, որ Հովհաննես Համբարձումյանին վերագրվող արարքի կատարման պահի՝ 2007 թվականի նոյեմբերի 07-ի դրությամբ յուրացման հանցակազմը «իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» կատարված լինելու որակյալ տարատեսակ չի ունեցել՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ նախկին քրեական օրենսգրքով մեղադրյալին վերագրված արարքի ՀՀ գործող քրեական օրենսգրքի համապատասխանեցման հարցը ենթակա է գնահատման և լուծման ոչ թե դրա ձևական կամ առերևույթ ուսումնասիրության, այլ առաջադրված մեղադրանքի փաստական նկարագրի բովանդակային գնահատման և համադրման միջոցով: Այլ խոսքով, սույն դեպքում ենթակա է քննարկման ոչ թե այն հարցը, թե հետադարձության կանոնների կիրառմամբ վերջնական ինչ քրեաիրավական գնահատական կարող է ստանալ Հովհաննես

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 7, թերթեր 110-117:

Համբարձումյանին վերագրվող արարքը, այլ այն, թե վերջինիս վերագրվող արարքի նկարագիրը ներկայիս քրեական օրենսգրքի որ հոդվածին է համապատասխանում:

Հիմք ընդունելով վերոհիշյալ պատճառաբանությունները՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործն ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին:

(…)

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև առարկայական ընդդատությունը սահմանող նորմերի փոփոխության դեպքում նախնական դատալսումների փուլում գտնվող քրեական գործն ըստ ընդդատության փոխանցելու ուղղակի արգելք առկա չէ, այդուհանդերձ Դատարանի գնահատմամբ նման իրավիճակներում անհրաժեշտ է հաշվի առնել նմանօրինակ գործողությունների արդյունքում հանրային և մասնավոր շահերի ողջամիտ հավասարակշռության անհրաժեշտությունը: Դատարանի գնահատմամբ առարկայական ընդդատության փոփոխությամբ ստացված և տևական ժամանակ նախնական դատալսումների փուլում գտնվող քրեական գործը կրկին նույն հիմքով ընդդատության փոխանցումն առաջացնում է քրեական գործի չարդարացված շրջապտույտ:

Վերոհիշյալի լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստական հանգամանքները՝ Դատարանը հատկանշական է համարում հետևյալը.

- Ըստ առաջադրված մեղադրանքի՝ Հովհաննես Համբարձումյանին մեղսագրվող արարքի կատարումն ավարտվել է 2007 թվականի նոյեմբերի 07-ին:

- 2022 թվականի օգոստոսի 29-ին Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Դանիելյանի կողմից որոշում է կայացվել քրեական գործն ըստ ընդդատության հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

- 2022 թվականի սեպտեմբերի 19-ին հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

- 2022 թվականի սեպտեմբերի 29-ին հակակոռուպցիոն դատարանի դատավոր Գ.Հովհաննիսյանի կողմից որոշում է կայացվել ինքնաբացարկ հայտնելու մասին, որի հիմքով 2022 թվականի սեպտեմբերի 30-ին քրեական գործը մակագրվել է նույն դատարանի դատավոր Վ.Սարգսյանին:

- 2024 թվականի հուլիսի 26-ին որոշում է կայացվել քրեական գործն ըստ ընդդատության Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3.2.2. Համադրելով վերոհիշյալ փաստական տվյալները՝ Դատարանը գտնում է, որ առարկայական ընդդատության կանոնների փոփոխության հիմքով սույն քրեական գործի քննությունն արդեն իսկ մեկ անգամ վերսկսվել է, որից հետո հակակոռուպցիոն դատարանի վարույթում դրանով նախնական դատաքննությունը տևել են 1 (մեկ) տարի 11 (տասնմեկ) ամիս, ուստի Դատարանը գտնում է, որ նման պայմաններում քրեական գործի ըստ ընդդատության փոխանցումը գրեթե անիրատեսական է դարձնում ողջամիտ ժամկետում քրեական գործի քննության հնարավորությունը, ինչպես նաև առաջ է բերում քրեական գործի չարդարացված շրջապտույտի, քանի որ առնվազն նախքան հեռակա վարույթ կիրառելու հարցի քննարկումը Դատարանի կողմից կրկին տևական ժամանակ պետք է ձեռնարկվեն որոնողական միջոցներ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քրեական վարույթը առարկայական առումով ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, ինչն էլ հիմք է հանդիսանում Դատարանի համար իր անհամաձայնությունն հայտնել սույն քրեական վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ (…)»[3]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 8, թերթեր 3-10:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախաապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են*

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

առաջին աստիճանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

13.1. «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-31-Ն ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ *«Օրենսգրքի հավելված N 1-ում՝*

1) «Հոդված 296. Փողերի լվացումը» բառերը փոխարինել ***«Հոդված 296. 3-րդ մաս, 2-րդ կետ. Փողերի լվացումը՝*** *իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով» բառերով (…)»:*

Վերոգրյալից հետևում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ին ընդունված ՀՕ-31-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով (համապատասխանում է 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածին) նախատեսված հանցանքը հանդիսանում է կոռուպցիոն բնույթի և ենթակա է քննության Հակակոռուպցիոն դատարանում, եթե կատարվել է ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»***:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ համաձայն Հովհաննես Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի՝ վերջինս մեղսագրվող ենթադրյալ փողերի լվացումը չի կատարել *«պաշտոնեական դիրքը»*, ինչպես նաև *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը»* օգտագործելու եղանակով, գտել է, որ սույն քրեական վարույթն այլևս ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին:

Հակակոռուպցիոն դատարանը փաստել է նաև, որ մեղադրյալը մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման պահին չի հանդիսացել պաշտոնատար անձ, հետևաբար վերջինս ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունը չէր կարող կատարել *«պաշտոնեական դիրքը»* օգտագործելով: Միաժամանակ, արձանագրելով, որ հափշտակության՝ *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»* կատարելու ծանրացնող հանգամանքը Հ.Համբարձումյանի կողմից ենթադրյալ հանցանքը կատարելու պահին նախատեսված չի եղել, Հակակոռուպցիոն դատարանը գտել է, որ այն վերջինիս մեղսագրվել չի կարող[7]:

- Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն արձանագրել է, որ թեև Հ.Համբարձումյանին առաջադրված

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մեղադրանքում առկա չէ նշում իրեն վստահված գույքը *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»* հափշտակված լինելու մասին, այդուհանդերձ մեղադրանքում առկա է նշում «Արդշինինվեստբանկ» ՓԲ ընկերության «Վարդենիս» մասնաճյուղի վարկային բաժնի մասնագետի պաշտոնը վերջինիս կողմից զբաղեցրած լինելու, ինչպես նաև կեղծ վարկային պայմանագրեր կազմելով նշված բանկի գույքը յուրացնելու մասին, ինչից ակնհայտ է, որ Հ.Համբարձումյանն իրեն վերագրվող արարքը կատարել է ծառայողական լիազորություններն օգտագործելով[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Հովհաննես Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի ձևակերպումից հետևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված ենթադրյալ հանցանքները ***«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»,*** ինչպես նաև ***«պաշտոնական դիրքն օգտագործելու»*** եղանակով կատարելու հատկանիշները վերջինիս մեղսագրված չեն: Հետևաբար, հիմք ընդունելով գործը բացառապես անձին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների սահմաններում քննելու օրենսդրական պահանջը, գտնում ենք, որ Հ.Համբարձումյանին առաջադրված մեղադրանքի պայմաններում, սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Հովհաննես Գագիկի Համբարձումյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ ԳԴ/0309/01/24 (ՀԿԴ2/0013/01/22) քրեական վարույթն ընդդատյա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԵԼԻԶԱՎԵՏԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ